ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 746 - Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից՝ «Նաիրի» Հայկական Ազգային-Մշակութային Ինքնավարություն հասարակական կազմակերպության կողմից Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչությանը անհատույց հանձնելու նպատակով «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված ներքոհիշյալ սննդամթերքի ներմուծման և անհատույց հանձնման ծրագիրը՝

1) սննդամթերք՝ 21,208 կգ ընդհանուր քաշով, 1,172,750 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, բեռի ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի, ԵՏՄ-ի բեռ.

2) սննդամթերք՝ 22,000 կգ ընդհանուր քաշով, 525,119 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, բեռի ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի, ԵՏՄ-ի բեռ.

3) ալյուր՝ 22,027 կգ ընդհանուր քաշով, 423,800 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ-ի բեռ:

2. «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

30.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ